**Արձանագրություն N 4**
**«ՇՀԱՊՁԲ-15/7-3-2016 ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան «19» «հուլիսի» 2016թ.
ժամը՝ 16:30

Մասնակցում էին հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Հանձնաժողովի նախագահ Ս.Բարոյան
Հանձնաժողովի անդամներ Ա.Շահնազարյան,
Հանձնաժողովի քարտուղար Մ.Ղարիբյան

**1. «ՇՀԱՊՁԲ-15/7-3-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերում առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ**

1.1 Հիմք ընդունելով «Էկոմիքս» ՍՊ ընկերության և «Լիդեր Քոմփանի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված գրությունները՝ վերոհիշյալ ընկերություններին զրկել եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներին տրվող մինչև 15% գնային նախապատվությունից:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**2.«ՇՀԱՊՁԲ-15/7-3-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնային առաջարկների վերաբերյալ**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված են Հավելված 1-ում.
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**3.«ՇՀԱՊՁԲ-15/7-3-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնելու վերաբերյալ**

3.1 «ՇՀԱՊՁԲ-15/7-3-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 2-ում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**4. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին**

4.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝
ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<ֆինանսական միջոցներ>>

որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի հուլիսի 25-ը ներառյալ, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի հուլիսի 25-ը ներառյալ, ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

դ) 4.1 կետի ա), բ) և գ) ենթակետերով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները**

Հանձնաժողովի

Նախագահող՝ ________________ Ս.Բարոյան

Անդամներ՝ ________________ Հ.Մանուկյան

________________ Ա.Շահնազարյան

Քարտուղար ________________ Մ.Ղարիբյան